Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ – 2024

9–րդ դասարան - 120 րոպե

N 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 x 4 = 2 միավոր)

1. **Ի՞նչ է պատասխանում Քրիստոս սատանային երկրորդ փորձության ժամանակ.** ***(0,5 միավոր)***
   1) մարդ ապրում է Աստծո խոսքով
   2) միայն Աստծուն պետք է երկրպագել
   3) Աստծուն փորձել չի կարելի
   4) մարդը միայն հացով չի ապրում
2. **Մինչև ո՞ր թվականն է գործել Սկյուտարի ճեմարանը.** ***(0,5 միավոր)***
   1) 1859 թ.
   2) 1857 թ.
   3) 1838 թ.
   4) 1850 թ.
3. **Ըստ 1836 թ. եկեղեցական կանոնադրության՝ կաթողիկոսական ընտրությանը քանի՞ ձայնով էր մասնակցում Մայր Աթոռի միաբանությունը.** ***(0,5 միավոր)***
   1) 4
   2) 5
   3) 6
   4) 7
4. **Ե՞րբ է վերականգնվում Սյունյաց մետրոպոլիտությունը՝ Տաթև կենտրոնով.** ***(0,5 միավոր)***
   1) IX դարի առաջին կես
   2) XI դարի երկրորդ կես
   3) IX դարի երկրորդ կես
   4) XI դարի առաջին կես

N 5-9
Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 x 5 = 5 միավոր)

5. Զաքարյանների ժամանակ իրենց իրավունքները վերականգնում են Անիի, Սյունիքի, _____թեմերը: ***(1 միավոր)***

6. _____ ի կարգադրությամբ Սեղմնուտի ձորակում ամփոփված Ս. Թեոդորոսի գերեզմանի վրա մատուռ է կառուցվում: ***(1 միավոր)***

7. Լուսաբացին _____ առաքյալի մայր Մարիամը և մի քանի կանայք գնում են այն այգին, որտեղ Հիսուսի գերեզմանն էր, որպեսզի խունկով և անուշահոտ յուղերով օծեն Նրա մարմինը: ***(1 միավոր)***

8. Հովհաննեսի Ավետարանում կարդում ենք, թե հույն մարդկանց մի խումբ գալիս են _____ առաքյալի մոտ և խնդրում հանդիպել Հիսուսին: ***(1 միավոր)***

9. Հերովդեսի մահից հետո Հովսեփը մանուկ Հիսուսի և Մարիամի հետ վերադառնում է Եգիպտոսից և կրկին բնակություն հաստատում _____ քաղաքում: ***(1 միավոր)***

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

(1 x 2 = 2 միավոր)

10. Իրադարձությունը համապատասխանեցնել եկեղեցու/վանքի անվանը. ***(1 միավոր)***

1. Ստեփանոս Դ. Տղան Սմբատ Արծրունուն օծում է որպես Հայոց թագավոր:
2. Ս. Գրիգոր Տաթևացին ձեռնադրվում է քահանա:
3. 1562 թ. Միքայել Սեբաստացին հրավիրում է մի նոր գաղտնի խորհրդաժողով:
4. Սարգիս Ա.-ն, Պետրոս Ա.-ին կաթողիկոս ձեռնադրելուց հետո, տեղափոխվում է և ապրում երեք տարի:

ա. Ս. Խաչ մայր եկեղեցի
բ. Ս. Աստվածածին մայր եկեղեցի
գ. Ս. Հակոբ հայոց վանք
դ. Ամարասի վանք
ե. Հոռոմոսի վանք

1	
2	
3	
4	

11. Իրադարձությունը համապատասխանեցնել ժամանակահատվածին: ***(1 միավոր)***

1. Աղթամարի կաթողիկոսությունը, որի կաթողիկոսին հաստատում էին այդ կողմերի մահմեդական տիրակալները, երկար վիճաբանություններից հետո, ընդունում է Էջմիածնի կաթողիկոսության գերագահությունը:
2. Սկսվում է հայ ժողովրդի և Հայոց Եկեղեցու վերազարթոնքը, որն անխզելիորեն կապված է Ս. Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսի գործունեության հետ:
3. Կաթոլիկ քարոզիչները հաստատվում են Նախիջևանի գավառի մի շարք բնակավայրերում, որով Նախիջևանը դառնում է կաթոլիկ եպիսկոպոսության նստավայր:
4. Առաջին անգամ բարձրացվում է կաթողիկոսական աթոռը Սսից Մայր Հայաստան տեղափոխելու հարցը:

ա. XIII դարի վերջեր
բ. XIV դարի առաջին կես
գ. XVII դարի 30-ական թթ.
դ. XVIII դարի վերջ
ե. XIX դարի 30-ական թթ.

1	
2	
3	
4	

N 12-13
Աշխատանք սկզբնաղբյուրով
(1 x 4 = 4 միավոր)

12. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. ***(2 միավոր)***

«…. դարձավ մարդասեր ասպծու ծառայությանը, այնուհետև մերկացավ [իրենից] իշխանական ցանկությունները, և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի հետից: Եվ [հավատքի] հրամաններին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուրով մտավ միայնակեցական կարգի մեջ …. »:

1. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ մասին է գրել հեղինակը: *(1 միավոր)*

_____

13. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. ***(2 միավոր)***

«….Այն հիմնեց Ծաղկոցաձորի կողմում, բարձրավանդակ տեղում՝ տեսնողներին հիացնող մեծ սրբատաշ քարերով և նուրբ զարդաքանդակներով, լուսաբեր պատուհաններով, եռյակ դռներով, սքանչելատես գմբեթով, որ նման էր երկնքի գնդին»:

1. Ո՞ւմ աշխատությունից է հատվածը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ր եկեղեցու կառուցումն ու տեսքն է նկարագրում հեղինակը: *(1 միավոր)*

_____

N 14-16
Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: ***(0,5 միավոր)***

Հովհաննես, Թովմաս, Մատթեոս, Ալփեոս, Պետրոս, Հակոբոս

_____

14. 2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ: ***(0,5 միավոր)***

Սերբեր, լեհեր, հույներ, ռումինացիներ, բուլղարներ

_____

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. ***(1 միավոր)***

ա. կաթողիկոս, եպիսկոպոս, դպիր, վարդապետ, սարկավագ
բ. կաթողիկոս, դպիր, քահանա, եպիսկոպոս, սարկավագ
գ. կաթողիկոս, քահանա, վարդապետ, եպիսկոպոս, սարկավագ

_____

_____

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված. ***(1 միավոր)***

ա. Ս. Ծնունդ, Ավետում, Ս. Սարգիս, Պայծառակերպություն, Վերափոխում
բ. Ս. Ծնունդ, Տյառնընդառաջ, Ս. Վարդանանց տոն, Պայծառակերպություն, Ս. Հարություն
գ. Ս. Ծնունդ, Ծաղկազարդ, Ս. Հարություն, Պայծառակերպություն, Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի ....

_____

_____

16. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: ***(1 x 2 = 2 միավոր)***

1) Խաչի վրա Հիսուս Քրիստոս Հակոբոս առաքյալի խնամքին է հանձնում մորը՝ Մարիամ Աստվածանին:

2) Ավագ շաբաթվա օրերին եկեղեցին վերապրում է մարդկության անցած ուղին՝ դրախտային երանավետ կյանքից, անհնազանդության անկումից մինչև Քրիստոսի հարությամբ պարգևած փրկության հուսառատ պահը, շնորհն ու օրհնությունը:

3) Երբ Հովսեփն ու Մարիամը 40 օրական Հիսուսին տանում են տաճար ընծայելու՝ մանկանն ընդառաջ է ելնում Աննա մարգարեուհին, որը նույնպես իր կյանքի մեծ մասն ապրել էր տաճարում:

4) Առաքյալներից Բարդուղիմեոսն ուշանում է Աստվածամոր հուղարկավորությունից և նրան մխիթարելու համար Թադեոսը հանձնում է Աստվածամոր պատկերը:

5) Ս. Մարիամ Աստվածածնին, խաչին, սուրբ նահատակներին, եկեղեցուն նվիրված տոները ևս անվանվում են տերունական:

17. Շարադրանք
(4 x 0,5 =2 միավոր)

1. **Ինչպե՞ս են ձևավորվել քրիստոնեական եկեղեցու հիմնական ուղղությունները: Ներկայացրեք դրանք:** *(0,5 միավոր)*
2. **Ինչի՞ վրա է հիմնված Հայոց Եկեղեցու Հավատո հանգանակը. համառոտ ներկայացրեք բովանդակությունը:** *(0,5 միավոր)*
3. **Ներկայացրեք Հիսուսի Վերջին ընթրիքը. Եկեղեցու ո՞ր խորհուրդն է հաստատվել այդ ժամանակ:** *(0,5 միավոր)*
4. **Շարադրեք Խաչվերաց տոնի պատմությունը:** *(0,5 միավոր)*